

4. **Փոխպատուաստում** (Transplantation)

Բժշկութեան մէջ, փոխպատուաստումը՝ դարմանումի նպատակով, մարմնի որոշ բջիջներու, հիւսուածքներու կամ մասերու (երիկամ, լեարդ, թոք, սիրտ, մատ, ձեռք, եւայլն...) փոխադրումն է, այլ անհատի մը մօտ, որ այդ մասերուն անհրաժեշտօրէն պէտքը ունի:

Կան փոխպատուաստումի երեք ձեւեր, համաձայն *տոուող* (Donor) եւ *ընդունող* (Recipient) կողմերուն.-

- **Ինքնափոխպատուաստում** (Autotransplantation),

երբ տուողը ու ընդունողը նոյն անձն է, օրինակ գեղագիտական վիրաբուժութեան մէջ մաշկի փոխպատուաստումը. կամ սրունքի երակներու փոխպատուաստումը՝ սրտամկանի վրայ, որպէս սրտի պսակաձեւ անօթ (Coronary):

- **Այլափոխպատուաստում** (Allotransplantation),

երբ տուող ու ընդունող անձերը տարբեր են, օրինակ մարմնի կարգ մը մասերու (երիկամ, լեարդ, եւայլն...) փոխպատուաստումը առաջին անձէն՝ երկրորդ անձին:

- **Տարափոխպատուաստում** (Xenotransplantation),

երբ *տուողն* ու *ընդունողը* կենսաբանական տարբեր տեսակներու կը պատկանին, օրինակ կարգ մը անասուններէ (խոզ, եգ, եւայլն...), որոշ մասերու (օրինակ՝ սրտի փական = Valve), մարդու մօտ (օրինակ՝ սրտի մէջ փոխպատուաստումը):

Փոխպատուաստումներու դարմանական այս եղանակը, հակառակ կարգ մը բժշկական, վիրահատական, ինչպէս նաեւ հոգեբանական բարդութիւններուն (Complications), կրնայ բազմաթիւ հիւանդներու կեանքը փրկել եւ անոնց ապրելակերպը բարելաւել: Բժշկագիտական բարդութիւններու գլխաւորը, *ընդունող* անձի մօտ յայտնուող օտար մարմնի դէմ հակազդեցութիւնն է, այլ խօսքով *պատուաստուած* մասի եւ *ընդունող* անձի միջեւ անհամատեղելիութիւն մը, որու հետեւանքով ընդունող մարմինը կրնայ բոլորովին մերժել *պատուաստուած* օտար մասը: Այս լուրջ բարդութեան դէմ կան սակայն որոշ դեղեր, որոնք յիշեալ անհամատեղելիութիւնը կրնան ընկճել կամ ախտագերծել:

Ընդհանրապէս փոխպատուաստում կը կատարուի, երբ մարմնի մասեր *տուող* (Donor) անձին մօտ ուղեղային մահ արձանագրուած կ'ըլլայ. սակայն *տուող* անձը, կրնայ նաեւ ապրող ու գիտակից էակ մը ըլլալ: Դարմանական այս ոլորտէն ներս բժշկութիւնը մեծ դժուարութիւններու կը բախի, որովհետեւ մեծ պահանջք կայ մարմնի մասերու, սակայն *տուող* (Donor) անձերը համեմատաբար շատ քիչ են :

Բարոյագիտական տեսանկիւնէն դիտուած, *ուղեղային մահը* (անգլ.՝ Brain